**Օրինակելի ձև**

Հավելված N 1
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

## ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

________________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը
<<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կողմից <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի .................................... չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի համարը
և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

________________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը
դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

________________________________-ն էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ___________
Ընթացակարգի մասնակցի անվանումը

_______________________________________________ ____________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

**<u>Օրինակելի ձև</u>**

Հավելված N 2
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

**ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ**

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>> ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
___________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

| **Չափաբաժինների համարները** | **Գնման առարկայի անվանումը** | **Արժեք*** | **ԱԱՀ**** | **Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Շարժիչի յուղ | | | |
| 2 | Շարժիչի յուղ | | | |
| 3 | Փոխանցման տուփի յուղ | | | |
| 4 | Քսայուղ | | | |
| 5 | Արգելակի հեղուկ | | | |
| 6 | Անվադող 205*70 R-15 | | | |
| 7 | Անվադող 215*90 R-15 | | | |
| 8 | Անվադող 205*70 R-14 | | | |
| 9 | Անվադող 205*70 R-16 | | | |
| 10 | Կցորդման դիսկ | | | |
| 11 | Կցորդման դիսկ | | | |
| 12 | Արգելակման կոճղակ | | | |
| 13 | Արգելակման կոճղակ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Արգելակման կոճղակ | | | |
| 15 | Արգելակման կոճղակ | | | |
| 16 | Կցորդման մուֆտ | | | |
| 17 | Կցորդման մուֆտ | | | |
| 18 | Շարժիչի սեղմող սկավառակ | | | |
| 19 | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | | | |
| 20 | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | | | |
| 21 | Ստուպիցայի առանցքակալ | | | |
| 22 | Ստուպիցայի առանցքակալ | | | |
| 23 | Առջևի ափսե | | | |
| 24 | Առջևի ափսե | | | |
| 25 | Շարժիչի էլեկտրակայծային մոմեր /վառոցքի մոմեր/ | | | |
| 26 | Վառոցքի մոմեր | | | |
| 27 | Վառոցքի մոմեր | | | |
| 28 | Էքսկավատորի բարձր ճնշման ռետինե խողովակ | | | |
| 29 | Բարձր ճնշման ռետինե խողովակ | | | |
| 30 | Էքսկավատորի բարձր ճնշման ռետինե խողովակ | | | |
| 31 | Խնձորակ | | | |
| 32 | Առանցքակալ | | | |
| 33 | Դինամոյի փաթույթ | | | |
| 34 | Ստարտերի փաթույթ | | | |
| 35 | Ստարտերի խարիսխ | | | |
| 36 | Տանող-տարվող սկավառակ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 37 | Բենզանասոս ինժեկտորի | | | |
| 38 | Սալնիկ | | | |
| 39 | Միջադիր | | | |
| 40 | Միջադիր | | | |
| 41 | Յուղի ֆիլտր | | | |
| 42 | Օդի ֆիլտր | | | |
| 43 | Զգածող | | | |
| 44 | Բաշխիչ-ընդհատիչ կոնտակտ | | | |
| 45 | Ռեսսորի վտուլկա | | | |
| 46 | Արգելակման գլխավոր բաչոկի ռեմ. կոմպլեկտ | | | |
| 47 | Արգելակման մանժետ | | | |
| 48 | Հակասառիչ հեղուկ /անտիֆրիզ/ | | | |

* 3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

________________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

____________________2014թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

***Նախագիծ***

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ԳՆՄԱՆ
N <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>>

ք. Երևան "……" …………… 2014թ.

<<Մելիորացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս ՓԲԸ-ի տնօրեն Վ. Թադևոսյանի, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և "………………."-ն, ի դեմս տնօրեն …………..ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոպահեստամասերը (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:
2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1. Գնորդն իրավունք ունի՝**
3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից.
3.1.2 Եթե հանձնվել է անպատճաշ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.
ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և

պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտականությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատճաշ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև -- տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետներում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. **Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ .................. (................................) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր Ապրանքի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. **Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

## **6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված ՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել

է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղև, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանարի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցե իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգովորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է ........... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. ԿՈՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|

Հավելված 1
“......” ................ 2014թ. կնքված N <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>>
ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | չ/մ | քանակը | տեխնիկական բնութագիրը | մատակարարման վայրը |
| 1 | Շարժիչի յուղ | լ | 450 | M20 E70 SAU 50 կամ համարժեք: ՏՊ 253-011-00151742-95: Առանց փխումի և փքումով դիզելային և կարբյուրատորային շարժիչների համար ունիվերսալ շարժիչի յուղ, կիսասինթետիկ: Կինեմատիկ մածուցիկությունը $100^0C$ դեպքում՝ 12մմ$^2$/վ-ից ոչ պակաս, $-18^0C$ դեպքում՝ 10400 մ մ$^2$/վ-ից ոչ ավել, մածուցիկության ինդեքսը՝ 115-ից ոչ պակաս, բռնկման ջերմաստիճանը՝ $210^0C$-ից ոչ ցածր, սառչման ջերմաստիճանը՝ $-30^0C$-ից ոչ բարձր, մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ 0.015%-ից ոչ ավել, ջրի մասնաբաժինը՝ հետքեր, խտությունը $20^0C$ դեպքում՝ 900գ/սմ$^3$-ից ոչ ավել չօգտագործված, հրավտանգ: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: Արտադրող գործարանի որակի անձնագիրը, սերտիֆիկատը և ՌԴ-ի քիմոտոլոգիայի 25-րդ ԳՀԻ-ի կողմից տրված եզրակացությունը | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 2 | Շարժիչի յուղ | լ | 50 | Լյուքս 15 W40 SG/CD կամ համարժեք: Միջազգ.ստանդ.SAE-15W40 API-SG/CF կամ համարժեք: Ինժեկտորային շարժիչների համար, կիսասինթետիկ, կինեմատիկ մածուցիկությունը $100^0C$ դեպքում՝ 13.5-14.5 մմ$^2$/վ, մածուցիկության ինդեքսը՝ 120-ից ոչ պակաս, բռնկման ջերմաստիճանը՝ $210^0C$-ից ոչ ցածր, սառչման ջերմաստիճանը՝ $-30^0C$-ից ոչ բարձր, մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ 0.015%-ից ոչ ավել, ջրի մասնաբաժինը՝ հետքեր, խտությունը $20^0C$ դեպքում՝ 905կգ/ մ$^3$-ից ոչ ավել չօգտագործված, հրավտանգ: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 3 | Փոխանցման տուփի յուղ | լ | 50 | TCP-15k կամ համարժեք, ԳՕՍՏ 25652: Մեխանիկական փոխհաղորդման յուղման համար, կինեմատիկ մածուցիկությունը $100^0C$ դեպքում՝ 15.0 - 1մմ$^2$/վ-ից ոչ պակաս, բռնկման ջերմաստիճանը՝ $185^0C$-ից ոչ ցածր, սառչման ջերմաստիճանը՝ $-20^0C$-ից ոչ բարձր, մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ 0.03%-ից ոչ ավել, ջրի մասնաբաժինը՝ | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | հետքեր, խտությունը $20^0C$ դեպքում՝ 930գ/սմ$^3$-ից ոչ ավել չօգտագործված, հրավտանգ: Արտադրող գործարանի տարրողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: | |
| 4 | Քսայուղ | կգ | 120 | Լիտոլ-24 կամ համարժեք: ԳՕՍՏ 21150 Մեխանիզմներում շփման ուժերը փոքրացնելու համար: միատարր քսուք դեղինից մինչև շագանակագույն, կաթիլայնության ջերմաստիճանը՝ $185^0C$-ից ոչ ցածր, պենետրացիան $25^0C$ դեպքում՝ 220-250 մմ/10, գոլորշիացումը $120^0C$ դեպքում՝ 6%-ից ավել: Մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ 0.05%-ից ավել, ջրի առկայությունը՝ բացակա, չօգտագործված, հրավտանգ: Արտադրող գործարանի տարրողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 5 | Արգելակի հեղուկ | շիշ | 10 | ՏՊ 2451-004 -10488057: Արգելակման հեղուկ՝ բորային հիմքով, պոլիէֆիր պարունակող միատարր թափանցիկ հեղուկ՝ դեղինից մինչև շագանակագույն, կինեմատիկ մածուցիկությունը՝ $100^0C$ դեպքում՝ 2.0 մմ$^2$/վ-ից ոչ պակաս, $-40^0C$ դեպքում՝ 1450 մմ$^2$/վ-ից ոչ ավել, եռման ջերմաստիճանը՝ $165^0C$-ից ոչ ցածր, մեխանիկական մասնիկներ և ջրի առկայությունը՝ բացակա, չօգտագործված, թունավոր: Արտադրող գործարանի տարրողությունում՝ 455գ-ոց շշերով: | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 6 | Անվադող 205*70 R-15 | հատ | 4 | Անվադողեր անվախցով, համասեզոնային մարդատար ավտոմեքենաների համար "Կամա" կամ համարժեք, լրակազմի մեջ մտնում են՝ դողը և օդախցիկը փականով ԳԱԶ-3102-ի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 7 | Անվադող 215*90 R-15 | հատ | 4 | ՈՒԱԶ 39621-01 ավտոմեքենայի համար, անվախցով համասեզոնային "Կամա" կամ համարժեք | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 8 | Անվադող 205*70 R-14 | հատ | 2 | ԳԱԶ-31029 ավտոմեքենայի համար "Կամա" կամ համարժեք, լրակազմը՝ անվախուց և անվադող, համասեզոնային | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 9 | Անվադող 205*70 R-16 | հատ | 2 | Անվադողեր ՎԱԶ 2121 ավտոմեքենայի համար "Կամա" կամ համարժեք, լրակազմը՝ անվախուց և անվադող, համասեզոնային | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 10 | Կցորդման դիսկ | հատ | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար, գործարանային արտադրության՝ անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Կցորդման դիսկ | հատ | 1 | ՎԱԶ-21213-ի համար գործարանային արտադրության՝ անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 12 | Արգելակմա ն կոճղակ | կոմպլ. | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 13 | Արգելակմա ն կոճղակ | կոմպլ. | 1 | ՌԻԱԶ 3962101 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 14 | Արգելակմա ն կոճղակ | կոմպլ. | 1 | ՎԱԶ-21213 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 15 | Արգելակմա ն կոճղակ | կոմպլ. | 1 | ԳԱԶ-31029 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 16 | Կցորդման մուֆտ | հատ | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 17 | Կցորդման մուֆտ | հատ | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար՝ գործարանային վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 18 | Շարժիչի սեղմող սկավառակ | հատ | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 19 | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | կոմպլ. | 1 | ՎԱԶ-2121 ավտոմեքենայի համար՝ գործարանային արտադրության մխոց և օղեր, կլադիշներ, մխոցամատեր, թևեր, կլապաններ, կլապանի սալնիկներ, ներդիրների կոմպլեկտ առջևի և հետևի սողնիկ, ատամանիվներ, ցեպ: | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 20 | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | կոմպլ. | 1 | ԳԱԶ-31 ավտոմեքենայի համար մխոցներ, մխոցի մատեր, մխոցի օղեր, մխոցի թևեր, ներդիրներ, կլապաներ և սալնիկներ, աստղանիվներ և ցեպ, ծնկային լիսեռ | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 21 | Ստուպիցայ ի առանցքակ ալ | հատ | 6 | ԳԱԶ-31 ավտոմեքենայի համար գործարանային արտադրության՝ անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 22 | Ստուպիցայ ի առանցքակ ալ | հատ | 4 | ՎԱԶ-2121 ավտոմեքենայի համար՝ գործարանային արտադրության անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Առջևի ափսե | կոմպլ. | 2 | ՎԱԶ-2121 ավտոմեքենայի համար՝ գործարանային արտադրության անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 24 | Առջևի ափսե | կոմպլ. | 2 | ԳԱԶ-31 ավտոմեքենայի համար գործարանային արտադրության՝ անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 25 | Շարժիչի էլեկտրակայծային մոմեր /վառոցքի մոմեր/ | կոմպլ. | 2 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 26 | Վառոցքի մոմեր | կոմպլ. | 2 | ԳԱԶ-31029 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 27 | Վառոցքի մոմեր | կոմպլ. | 2 | ՎԱԶ-2121 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 28 | Էքսկավատորի բարձր ճնշման ռետինե խողովակ | հատ | 3 | 41 չափի 0.8մ և 1.0մ երկարությամբ գործարանային արտադրության | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 29 | Բարձր ճնշման ռետինե խողովակ | հատ | 5 | 27մմ չափի 0.8մ, 1.0մ, և 1.2մ երկարության, գործարանային արտադրության | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 30 | Էքսկավատորի բարձր ճնշման ռետինե խողովակ | հատ | 4 | 32մմ չափի 0.8մ, 1.0մ, և 1.2մ երկարության, գործարանային արտադրության | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 31 | Խնձորակ | հատ | 6 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 32 | Արանցքակալ | հատ | 6 | Տարբեր մակնիշի մեքենաների համար, գործարանային արտադրության | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 33 | Դինամոյի փաթույթ | հատ | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար, գործարանային արտադրության | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 34 | Ստարտերի փաթույթ | հատ | 1 | ՎԱԶ-2121 ավտոմեքենայի համար, գործարանային արտադրության | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 35 | Ստարտերի խարիսխ | հատ | 2 | ԳԱԶ-3102 և ՎԱԶ-2121 ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 36 | Տանող-տարվող սկավառակ | հատ | 2 | ԳԱԶ-31 և ԶԻԼ-131 ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 37 | Բենզանասոս ինժեկտորի | հատ | 1 | ԳԱԶ-3102 ավտոմեքենայի համար, գործարանային արտադրության՝ անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 38 | Սալնիկ | հատ | 6 | Տարբեր մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 39 | Միջադիր | կոմպլ. | 3 | Տարբեր մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 40 | Միջադիր | կոմպլ. | 1 | Բելոռուս ԷՕ-2621 մակնիշի էքսկավատորի համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 41 | Յուղի ֆիլտր | հատ | 6 | ԳԱԶ-31, ՎԱԶ-2121 և ՈՒԱԶ 3962101 մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 42 | Օդի ֆիլտր | հատ | 3 | ԳԱԶ-31 և ՎԱԶ-2121 մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 43 | Զգածող | հատ | 5 | ԳԱԶ-31 և ՎԱԶ-2121 մակնիշի ավտոմեքենաների համար, գործարանային արտադրության՝ անթերի վիճակում | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 44 | Բաշխիչ-ընդհատիչ կոնտակտ | կոմպլ. | 2 | ԳԱԶ-31 և ՎԱԶ-2121 մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 45 | Ռեսսորի վտուլկա | կոմպլ. | 3 | ԳԱԶ-3102, ԳԱԶ-31029 և ՈՒԱԶ 3962101 մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 46 | Արգելակման գլխավոր բաչոկի ռեմ. կոմպլեկտ | հատ | 3 | ԳԱԶ-3102, ԳԱԶ-31029 և ՈՒԱԶ 3962101 մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |
| 47 | Արգելակման մանժետ | հատ | 20 | ԳԱԶ-3102, ԳԱԶ-31029 և ՎԱԶ 21213 մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 48 | Հակասառի չ հեղուկ /անտիֆրիզ / | լ | 100 | Тосол концентрант FELIX կամ համարժեք, տարբեր մակնիշի ավտոմեքենաների համար | Արարատի մարզ, գյուղ Հայանիստ |

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 2
“......” ................ 2014թ. կնքված N <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>>
ծածկագրով գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2014թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 31-րդ աշխատանքային օրը | | Հունիս | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Շարժիչի յուղ | լ | | 25 | | 200 | | 200 | | 25 | | 450 | |
| 2 | Շարժիչի յուղ | լ | | 10 | | 15 | | 15 | | 10 | | 50 | |
| 3 | Փոխանցման տուփի յուղ | լ | | 10 | | 15 | | 15 | | 10 | | 50 | |
| 4 | Քսայուղ | կգ | | 10 | | 50 | | 50 | | 10 | | 120 | |
| 5 | Արգելակի հեղուկ | շիշ | | 1 | | 4 | | 4 | | 1 | | 10 | |
| 6 | Անվադող 205*70 R-15 | հատ | | | | 2 | | 2 | | | | 4 | |
| 7 | Անվադող 215*90 R-15 | հատ | | | | 2 | | 2 | | | | 4 | |
| 8 | Անվադող 205*70 R-14 | հատ | | | | 2 | | | | | | 2 | |
| 9 | Անվադող 205*70 R-16 | հատ | | | | | | 2 | | | | 2 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Կցորդման դիսկ | հատ | | | | 1 | | | | | | 1 | |
| 11 | Կցորդման դիսկ | հատ | | | | 1 | | | | | | 1 | |
| 12 | Արգելակման կոճղակ | կոմպլ. | | | | | | 1 | | | | 1 | |
| 13 | Արգելակման կոճղակ | կոմպլ. | | | | | | 1 | | | | 1 | |
| 14 | Արգելակման կոճղակ | կոմպլ. | | | | 1 | | | | | | 1 | |
| 15 | Արգելակման կոճղակ | կոմպլ. | | | | 1 | | | | | | 1 | |
| 16 | Կցորդման մուֆտ | հատ | | | | | | 1 | | | | 1 | |
| 17 | Կցորդման մուֆտ | հատ | | | | | | 1 | | | | 1 | |
| 18 | Շարժիչի սեղմող սկավառակ | հատ | | | | 1 | | | | | | 1 | |
| 19 | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | կոմպլ. | | | | 1 | | | | | | 1 | |
| 20 | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | կոմպլ. | | | | | | 1 | | | | 1 | |
| 21 | Ստուպիցայի առանցքակալ | հատ | | 1 | | 2 | | 2 | | 1 | | 6 | |
| 22 | Ստուպիցայի առանցքակալ | հատ | | 1 | | 1 | | 2 | | | | 4 | |
| 23 | Առջևի ափսե | կոմպլ. | | | | 1 | | 1 | | | | 2 | |
| 24 | Առջևի ափսե | կոմպլ. | | | | 1 | | 1 | | | | 2 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | Շարժիչի էլեկտրակ այծային մոմեր /վառոցքի մոմեր/ | կոմպլ. | | | | 1 | | 1 | | | | 2 | |
| 26 | Վառոցքի մոմեր | կոմպլ. | | | | 1 | | 1 | | | | 2 | |
| 27 | Վառոցքի մոմեր | կոմպլ. | | | | 1 | | 1 | | | | 2 | |
| 28 | Էքսկավատ որի բարձր ճնշման ռետինե խողովակ | հատ | | 1 | | 1 | | 1 | | | | 3 | |
| 29 | Բարձր ճնշման ռետինե խողովակ | հատ | | 1 | | 2 | | 2 | | | | 5 | |
| 30 | Էքսկավատ որի բարձր ճնշման ռետինե խողովակ | հատ | | 1 | | 1 | | 1 | | 1 | | 4 | |
| 31 | Խնձորակ | հատ | | 1 | | 2 | | 2 | | 1 | | 6 | |
| 32 | Առանցքակ ալ | հատ | | 1 | | 2 | | 2 | | 1 | | 6 | |
| 33 | Դինամոյի փաթույթ | հատ | | | | 1 | | | | | | 1 | |
| 34 | Ստարտեր ի փաթույթ | հատ | | | | | | 1 | | | | 1 | |
| 35 | Ստարտեր ի խարիսխ | հատ | | 1 | | 1 | | | | | | 2 | |
| 36 | Տանող-տարվող սկավառակ | հատ | | 1 | | 1 | | | | | | 2 | |
| 37 | Բենզանաս ու ինժեկտորի | հատ | | | | 1 | | | | | | 1 | |
| 38 | Սալնիկ | հատ | | 1 | | 2 | | 2 | | 1 | | 6 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | Միջադիր | կոմպլ. | | 1 | | 1 | | 1 | | | | 3 | |
| 40 | Միջադիր | կոմպլ. | | | | 1 | | | | | | 1 | |
| 41 | Յուղի ֆիլտր | հատ | | 1 | | 2 | | 2 | | 1 | | 6 | |
| 42 | Օդի ֆիլտր | հատ | | 1 | | 1 | | 1 | | | | 3 | |
| 43 | Զգածող | հատ | | 1 | | 2 | | 2 | | | | 5 | |
| 44 | Բաշխիչ-ընդհատիչ կոնտակտ | կոմպլ. | | | | 1 | | 1 | | | | 2 | |
| 45 | Ռեսսորի վտուլկա | կոմպլ. | | 1 | | 1 | | 1 | | | | 3 | |
| 46 | Արգելակման գլխավոր բաչոկի ռեմ. կոմպլեկտ | հատ | | 1 | | 1 | | 1 | | | | 3 | |
| 47 | Արգելակման մանժետ | հատ | | 1 | | 9 | | 9 | | 1 | | 20 | |
| 48 | Հակասառիչ հեղուկ /անտիֆրիզ/ | լ | | 10 | | 40 | | 40 | | 10 | | 100 | |

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 3
“......” ................ 2014թ. կնքված N <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>>
ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Շարժիչի յուղ | 5% | 50% | 94% | 94% | 94% | 100% | 100% | 100% | 100% |
| 2. | Շարժիչի յուղ | 20% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 3. | Փոխանցման տուփի յուղ | 20% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 4. | Քսայուղ | 8% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 5. | Արգելակի հեղուկ | 10% | 50% | 90% | 90% | 90% | 100% | 100% | 100% | 100% |
| 6. | Անվադողղ 205*70 R-15 | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 7. | Անվադողղ 215*90 R-15 | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 8. | Անվադողղ 205*70 R-14 | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 9. | Անվադողղ 205*70 R-16 | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 10. | Կցորդման դիսկ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 11. | Կցորդման դիսկ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 12. | Արգելակման կոճղակ | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 13. | Արգելակման կոճղակ | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 14. | Արգելակման կոճղակ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 15. | Արգելակման կոճղակ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 16. | Կցորդման մուֆտ | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 17. | Կցորդման մուֆտ | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 18. | Շարժիչի սեղմող սկավառակ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 19. | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 20. | Շարժիչի ռեմ. կոմպլեկտ | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 21. | Ստուպիցայի առանցքակալ | 16% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 22. | Ստուպիցայի առանցքակալ | 25% | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23. | Առջևի ափսե | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 24. | Առջևի ափսե | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 25. | Շարժիչի էլեկտրակայծային մոմեր /վառոցքի մոմեր/ | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 26. | Վառոցքի մոմեր | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 27. | Վառոցքի մոմեր | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 28. | Էքսկավատորի բարձր ճնշման ռետինե խողովակ | 33% | 66% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 29. | Բարձր ճնշման ռետինե խողովակ | 20% | 60% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 30. | Էքսկավատորի բարձր ճնշման ռետինե խողովակ | 25% | 50% | 75% | 75% | 75% | 100% | 100% | 100% | 100% |
| 31. | Խնձորակ | 16% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 32. | Առանցքակալ | 16% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 33. | Դինամոյի փաթույթ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 34. | Ստարտերի փաթույթ | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 35. | Ստարտերի խարիսխ | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 36. | Տանող-տարվող սկավառակ | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 37. | Բենզանասոս ինժեկտորի | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 38. | Սալնիկ | 16% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 39. | Միջադիր | 33% | 66% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 40. | Միջադիր | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 41. | Յուղի ֆիլտր | 16% | 50% | 80% | 80% | 80% | 100% | 100% | 100% | 100% |
| 42. | Օդի ֆիլտր | 33% | 66% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 43. | Զգածող | 20% | 60% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 44. | Բաշխիչ-ընդհատիչ կոնտակտ | | 50% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 45. | Ռեսսորի վտուլկա | 33% | 66% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 46. | Արգելակման գլխավոր բաչոկի ռեմ. կոմպլեկտ | 33% | 66% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 47. | Արգելակման մանժետ | 5% | 50% | 95% | 95% | 95% | 100% | 100% | 100% | 100% |
| 48. | Հակասառիչ հեղուկ /անտիֆրիզ/ | 10% | 50% | 90% | 90% | 90% | 100% | 100% | 100% | 100% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 4
“......” ............... 2014թ. կնքված N <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>>
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ __________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հհ_____________________________
______________________________
հվհհ___________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<___________________>> 20    թ.

Պայմանագրի անվանումը՝ _______________________________________________________________
_________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<___________________>> 20    թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _________________________________________________________________ և Կատարողը՝ ի դեմս_______________________________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Ապրանքների մատակարարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
____________________________
Ազգանուն, Անուն

Ապրանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
__________________________
Ազգանուն, Անուն